

մարդպետն Յայր ի սուրբ տեղեացն, եւ էջ յափն գետոյն հոսանացն եփրատու, ի հովիտսն թանձրախոռն անտառին, ի գետախառնունսն երկուց գետոցն, ի թաւութ խարձիցն մամխեացն, որ ի տեղւոջն ի հնոցն իմն շինած քաղաք՝ զոր շինեալ Սանատրուկ արքայի, որում անուն տեղւոյն Մծուրք կոչի:

19 Արդ իբրեւ եկն եհաս յայն տեղի, ապա յուզեցաւ դատաստան բարկութեան ի Տեառնէ ի վերայ անաւրէնն Յայրի, եւ իւրոց զործոցն եւ բանիցն խաւսելոյ: 20 Ապա մատնեցաւ Նա ի ձեռս առն միոյ, որոյ անուն Շաւասայ կոչէր, մնացորդ ազգին Արծրունեաց: 21 Մինչդեռ Նատեր Նա ի կառս, եւ երթայր զճանապարհն, եկն Շաւասայն, սկսեալ պատմել մարդպետին¹ սուտ ի քմաց իւրոց, եւ ասէ. Արջ մի տեսի սպիտակ իբրեւ զծիւն: 22 Եւ հրապուրեաց զմարդպետն իջանել ի կառաց անտի, եւ հեծանել ի Նժուզի. եւ մտեալ պառակէին մայրեացն: 23 Իսկ իբրեւ ընդ թաւութսն անկանէին, զկնի եղեալ սակաւ մի Շաւասայն յետսագոյն մնացեալ, յետոյ յառաջ Նետիւ հարկանէր զմէջ Ներքինոյն Յայրի. անդէն թափ հանեալ զնետն, եւ անդ յերկիր անգեալ սատակեցաւ: 24 Եւ առն Աստուծոյ ասացեալքն հուպ ընդ հուպ վաղվաղակի կատարեցաւ զի ամենեւին բան ի գետին ոչ անկանէր առն Աստուծոյ:

ԳԼՈՒԽ ԺԵ.

1 Յաղագս անաւրէնութեան թագաւորին Արշակայ, թէ ո՛րպէս եսպան զորդի եղբար իւրոյ, որում անուն Գնէլ, ի քսութենէ չարութենէն Տիրիթայ. կամ ո՛րպէս յանդիմանեալ եղէ յառնէն Աստուծոյ ի Ներսիսէ, կամ ո՛րպէս զմեւս եւս եղբարորդին Տիրիթ. կամ ո՛րպէս զկինն Գնելայ արար իւր կին. կամ ո՛րպէս Էած իւր կին ի Յունաց զՈղիմպին. կամ որպէս երեցն Մրջինիկն մահուան դեղովն զնա ընդ անբէնսն² սպանանէր՝ խորհրդով Փառանձեմայ:

2 Չայնու ժամանակաւ Էր դուստր մի գեղեցիկ Անդովկայ ուրումն, մի ի Նախարարացն Նահապետին Սիւնեաց, որում անուն Փառանձեմ կոչէր. զորմէ կարի անուանեալ Էր գեղեցկութեամբ եւ պարկեշտութեամբ: 3 Ապա Գնէլ պատանեակն եղբարորդին արքային Էառ զնա ի կնութիւն իւր: 4 Եւ համբաւ գեղեցկութեան աղճկանն ընդ վայրսն տարածեցաւ, եւ համբաւ գեղոյ Նորա յաճախեալ բազմանայր եւ հնչէր: 5 Ապա առ համբաւ ցանկութեան անուանն տրփեալ լինէր մին եւս հաւրեղբարորդին Գնելոյ, որում անուն Տիրիթ կոչէր: 6 Վասն որոյ անգանէր ի գաղտագողաւսս, մինչ զի զնուն իւր տեսանել կարասցէ: 7 Եւ յորժամ կարացն տեսլեանն՝ որում ցանգայր, այնուհե-

1 Օրինակ մի՝ եկն Շաւասայն, սկսաւ պատմել սուտ ի քմաց իւրոց

2 Օրինակ մի՝ ընդ անօրէնսն